ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

5/44

„01„ 06 2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2013 թվականի մայիս ամսվա որոշումները և արձակված կարգադրություններ :

Առդիր „14„ թերթից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5027-13
04 06 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» մայիսի 2013 թվականի N 33-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱ ՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 22.04.2013թվականի 4-րդ նիստի թիվ 14 - Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օտարել դասական աճուրդի ձևով Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող ծածկագիր 04-020-0101-0013 1 հա,ծածկագիր 04-020-0127-0044 1.3165 հա մակերեսներով V կարգի գյուղատնտեսության նծանակության վարելահողերը և ծածկագիր 04-020-0101-0014 5հա գյուղատնտեսական նծանակության այլ հողատեսքով հողատարածքները:

2.Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող հանդիսացող՝Ծածկագիր 04-020-0101-0013 1հա, Ծածկագիր՝ 04-020-0127-0044 1.3165հա մակերեսով և գյուղնշանակության այլ հողատեսքով Ծածկագիր 04-020-0101-0014 5հա հողամասերի օտարման մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, որը կազմում է համապատասխանաբար ծածկագիր՝ 04-020-0101-0013 992500 դրամ, Ծածկագիր 04-020-0121-0044 1306650դրամ,Ծածկագիր 04-020-0101-0014 287500դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2012 թվականի մայիսի 03
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2013թ. N 34-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման կարգը հաստատելու մասին » N 1582 – Ն որոշման 3-րդ կետը և ղեկավարվելով նույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման 3-րդ կետի Արմավիրի համայնքապետարանում ստեղծել «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողով» :
2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝համաձայն հավելված 2-ի:
4. Հանձնաժողովի ստեղծման մասին որոշման մեկական օրինակներ տրամադրել մարզային հանձնաժողովին և մարզային փրկարարական վարչությանը / հավելվածներով /:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյան

գ.Արմավիր
2013թվականի մայիսի 12-ի

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր
գյուղական համայնքի ղեկավարի 2013թ մայիսի 12-ի
N 34-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի նախագահ՝	Ռ.Ֆ.Մարգարյան
2.Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝	Ս.Ա.Լալայան
3.Քարտուղար՝	Գ.Մ.Հովհաննիսյան
Անդամներ՝	
4. /գյուղատնտեսության գծով մասնագետ /	Փ.Ս. Քալաշյան
5. /քաղաքաշինության գծով մասնագետ /	Վ.Ս.Մուրադյան
6. /ֆինանսական գծով մասնագետ /	Ա.Մ.Կարապետյան
7./առողջապահության գծով մասնագետ/	Ա.Ժ.Տ.Հարությունյան
8./անասնաբուժության գծով մասնագետ/	Տ.Ա.Սարգսյան
9./ոռոգման համակարգի մասնագետ /	Ս.Հ.Գասպարյան
10./ գազամատակարարման ցանցի մասնագետ/	Հ.Ս.Կարապետյան
11./ էլեկտրոմատակարարման ցանցի մասնագետ/	Կ.Ս.Հարությունյան
12./ջրամատակարարման ցանցի աշխատող/	Գ.Ա.Կարապետյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր
գյուղական համայնքի ղեկավարի 2013թ մայիսի 12-ի
N 34-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Սույն աշխատակարգով սահմանվում է Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի տարածքում գնահատման ու հաշվառման ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2.Արմավիր գյուղական համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պաճառված վնասների գնահատման գործընթացը՝կախված ընդգրկման ծավալից,հետևանքների բնույթից և նշանակությունից,համապատասխանաբար կազմակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված և մշտական գործող հանձնաժողովի կողմից:

3. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պաճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պտճառների ուսումնասիրման ու վերացման,ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պաճառված վնասների գնահատման համար՝

1/կազմվում է վնասված գույքի ցանկ՝նշելով դրանց տեսակը,գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2/ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3/գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը.

5.Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ,կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս,ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակաների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարությանը՝համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

6.Տեղեկատվությունը ներառվում է՝

1/ դեպքի օրը,ամիսը,տարեթիվը,ժամը և վայրը.

2/տուժողների ազգանունները,անունները,հայրանունները,նրանց ծննդյան օրը,ամիսը,տարեթիվը,բնակության և աշխատանքի վայրերը.

3/դեպքի վայր մեկնած՝փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4/դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝իրավիճակը,եղանակային պայմանները և այլն:

7.Արմավիր գյուղի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծված համայնքային հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1/գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2/բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3/ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.

4/բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում.

8. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պաճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի կազմում՝ըստ ուղղությունների ընդգրկվում են՝

1/մասնագետներ գյուղատնտեսության,ֆինանսական,անասնաբուժության ոլորտից,համայնքի բժշկական անձնակազմից,գազամատակարարման,ջրամատակարարման,էլեկտրամատակարարման և ոռոգման համակարգերի աշխատակիցներից:

2/հանձնաժողովի աշխատանքներին հրավիրվում են մասնագետներ Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից և մարզային հակահրդեհային տեսչությունից:

9.Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում,և համաձայնեցված ակտերը ներկայացնում են հանրապետական հանձնաժողով:

10. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պաճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» մայիսի 2013 թվականի N 35-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝Կարեն Զալիբեկի Ավետիսյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 034-003 /տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 14 փողոցի թիվ 41 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2013 թվականի մայիսի 16
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» մայիսի 2013 թվականի N 36-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝Ժանետա Մարտիրոսյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 046-006 /տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 18 փողոցի թիվ 12 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2013 թվականի մայիսի 16
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մայիսի 2013 թվականի N 37-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝Լևոն Ավետիսյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 017-017 /տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 14 փողոցի թիվ 78 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2013 թվականի մայիսի 21
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մայիսի 2013 թվականի N 38-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու
մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝Մելանյա Հովհաննիսյանին պատկանող բնակարանի /ծածկագիր 036-028 /տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 10 փողոցի թիվ 15/1 բնակարան .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2013 թվականի մայիսի 31
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մայիսի 2013 թվականի N 39-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի
17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման
ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝Մելանյա Հովհաննիսյանին պատկանող տնամերձ հողամասի և շինությունների /ծածկագիր 036-036/տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 10 փողոցի թիվ 15 հողամաս.
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ *Ռ.Ֆ.Մարգարյան*

2013 թվականի մայիսի 31
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» մայիսի 2013 թվական N 2

ՀԵՂԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հեղինե Հարությունյանի դիմումը և Արմավիր գյուղական համայնքի ավագանու համաձայնությունը 2013թվականի ապրիլի 22-ի N 16-Ա որոշմամբ.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2013թվականի մայիսի 2-ից Հեղինե Հարությունյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝նշանակելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի «Արմավիրի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Ալավերդի Կարապետյանին՝սահմանված կարգով կատարել աշխատավարձի վճարում համաձայն հաստիքացուցակի:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ - Ռ.Ֆ.Մարգարյան

«02» մայիսի 2013թ.
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 02» մայիսի 2013 թվական

N 3

ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 2-րդ մասով 111 հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Շուշանիկ Ղազարյանի հետ 2011թվականի մայիսի 02-ի թիվ 36 աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2013 թվականի մայիսի 02-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանի աշխատակազմի հավաքարար՝Շուշանիկ Ղազարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը.

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝Ալավերդի Կարապետյանին՝սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկի վճարում:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

«02» մայիսի 2013թ.
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» մայիսի 2013 թվական N 4

ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՉԱԳԱՆԻ ՓԻՐՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Սուսաննա Փիրոյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2013թվականի մայիսի 2-ից Սուսաննա Փիրոյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝նշանակելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանի աշխատակազմում որպես հավաքարար.

2.Հայաստանի Հանրապետության Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Ալավերդի Կարապետյանին՝սահմանված կարգով կատարել աշխատավարձի վճարում համաձայն հաստիքացուցակի:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

«02» մայիսի 2013թ.
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 03» մայիսի 2013 թվական N 5

ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով իրացնելու նպատակով՝հիմք ընդունելով համայնքի 2013թ.ապրիլի 22-ի ավագանու N 14-Ն որոշումը և համայնքի ղեկավարի 2013թ. մայիսի 3-ի N 33-Ա որոշումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների աճուրդային կարգով իրացման աճուրդավար նշանակել համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան,արձանագրող աշխատակազմի քարտուղար՝Գ.Մ.Հովհաննիսյան

2.Կազմակերպել և ՀՀ հողային օրենսդրությամբ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ավագանու կողմից սահմանված կարգով անցկացնել համայնքի ավագանու 2013թ.ապրիլի 22-ի N14-Ն որոշմամբ օտարման հանված հողատարածքների աճուրդ վաճառքը.

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

«03» մայիսի 2013թ.
գ.Արմավիր